

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 373 : 613.6

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Գ. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ, Ժ. Բ. ՄՄՇՈՒՐՅԱՆ, Ա. Է. ՀԱՄՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ

Երևան, Տիգրան Մեծի 67

e-mail.v.gyulazyan@mail.ru

Հողվածում ներկայացված է մասնագիտական առողջության ազդեցությունը աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացման վրա: Հատկապես կարևորվել է ուսուցչի մասնագիտական առողջությունը, որը սովորողների ուսուցման և դաստիարակման արդյունավետության ու որակի վրա մեծ դեր ունենալուց բացի, ազդում է նաև սովորողների առողջության վրա: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ միայն առողջ ուսուցիչը կարող է ապահովել կրթության բարձր որակ և արդյունավետություն՝ չվնասելով սովորողների առողջությանը:

Բանալի բառեր. ուսուցչի մասնագիտական առողջություն, ուսումնական գործընթացի արդյունավետություն, սովորողների առաջադիմություն, կրթության որակ:

Ներկայացված է իմփազրություն 21.04.2016թ.

Առողջության խնդիրները գիտնականներին անհանգստացրել են դեռ վաղ ժամանակներից: Առաջին անգամ իրենց աշխատանքներում այդ մասին նշել են հույն փիլիսոփաներ Արիստոտելը, Պլատոնը, Հիպոկրատը: Առողջության խնդիրներն այսօր էլ են հրատապ ու արդիական. մեծ նշանակություն է տրվում մասնագիտական առողջության խնդիրներին, որոնք առկա են մասնագետների շրջանում: Սակայն դեռ մի ընդհանուր կարծիք չի ձևավորվել այն մասին, թե որն է այս հասկացության բովանդակությունը: Ամերիկացի ինժեներ Ֆ.Թեյլորը արտադրությունում աշխատողին դիտում է որպես արտադրական գործընթացի մի մասնիկ, մի առանձին միավոր: Հեղինակի կարծիքով, աշխատողի, նրա անձի ֆիզիկական և հոգեկան հարմարավետության համար անհրաժեշտ է սոցիալական բարեկեցիկ միջավայր: Նրա ժամանակակից Ֆ.Ջիլբերտը գտնում է, որ աշխատանքի լավ կազմակերպիչը պետք է մարդու հոգին և մարմինը դիտի փոխադարձ կապվածության մեջ, այլ ոչ միմյանցից առանձին: Որքան մարդու համար կարևոր է ֆիզիկական առողջությունը, դրանից առավել կարևոր է նրա հոգեկան առողջությունը և սոցիալական բարեկեցությունը: Մեկի վնասվելն անպայման ուղղակիորեն ազդում է մյուսների և մարդու ընդհանուր աշխատունակության վրա: Կազմակերպիչը պետք է կարողնա ոչ միայն կողմնորոշվել աշխատողի մասնագիտական, գիտական և բարոյական զարգացվածության մեջ, այլ նաև առողջ ապրելակերպ վարելու ձգտում առաջացնի նրա մեջ:

Մասնագիտական առողջության վերաբերյալ հարցերն ակտիվորեն սկսել են քննարկվել Անգլիայում XX դարի սկզբում: Այսպես՝ Բ. Մասսիոն աշխատանքի պահպանության կանոններին հետևելը համարում է արտադրական հոգեբանության կարևոր խնդիրներից մեկը: Նրա կարծիքով արտադրությունում տեղի ունեցող դժբախտ

պատահարների գլխավոր պատճառներից մեկն էլ աշխատողների գերհոգնածությունն է, որն առաջացնում է ֆիզիկական թուլություն, հիշողության և ուշադրությունը կենտրոնացնելու խնդիրներ: Աշխատողի ծախսած էներգիան պետք է համարժեք լինի նրա առողջական վիճակին: Ֆ.Ուոտսոնը մեծ ուշադրություն էր դարձնում աշխատավորների հանգստի իրականացման վրա: Նա ասում էր, որ բարձր որակ աշխատանք իրականացնելու համար պետք է ստեղծել անհրաժեշտ հոգեկան և ֆիզիկական բոլոր պայմանները: Խորհրդային Ռուսաստանում մասնագիտական առողջության հարցերը ներկայացվել են Վ.Ի.Բեխտերևի, Յու. Վ.Վարդանյանի, Է.Ֆ.Զիլի, Ե.Մ.Իվանովի, Վ.Մ.Կարվասովսկու, Վ.Ն.Մյասիշչևի և այլոց կողմից կատարված համապատասխան աշխատանքներում: Վ.Ա.Պանամարենկոն մասնագիտական առողջությունը դիտել է որպես օրգանիզմի հատկություն, որը պահպանում է օրգանիզմի այն պաշտպանական և փոխհատուցող (կոմպենսացնող) մեխանիզմները, որոնք մասնագիտական գործունեության ցանկացած պայմաններում ապահովում են աշխատողի մասնագիտական հուսալիությունն ու աշխատունակությունը: Ինչպես նկատում ենք, տվյալ սահմանման մեջ կարևոր տեղ են գրավում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը և պոտենցիալ հնարավորությունները՝ պահուստավորված ուժերը: Որքան այն շատ է և լավ է արտահայտված, այնքան ապահովված է աշխատողի մասնագիտական երկարակեցությունը [1]:

Ա.Գ.Մակլակովը գտնում է, որ մասնագիտական առողջությունը մասնագետի առողջական վիճակի մի որոշակի աստիճան է, որը մասնագիտական գործունեության պահանջների և նրա բարձր արդյունավետության ապահովողն ու պատասխանատուն է [2]: Գ.Ս.Նիկիֆորովի կարծիքով մասնագիտական առողջության խնդիրներին վերաբերող հարցերի արդյունավետ վերլուծության համար հիմք կարող է հանդիսանալ մասնագիտական գործունեության հոգեբանական ապահովվածության գաղափարը: Այս ասելով՝ նա նկատի ունի աշխատողի հոգեբանական ապահովվածությունը մասնագիտական գործունեություն ծավալելիս [3]:

Որպես մասնագիտական առողջության չափանիշներ գիտնականներն ընդունում են մարդու աշխատունակությունը, որը բնութագրվում է որպես «մասնագետի գործունեության առավելագույն հնարավոր արդյունավետություն», ինչը պայմանավորված է նրա օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակով [4]: Արդյունավետությունը ծախսած միջոցների համեմատ ստացած արդյունքի գնահատումն է: Որքան փոքր ծախսի դիմաց մեծ արժեք է ստեղծվում, այնքան աշխատանքի արդյունավետությունը բարձր է գնահատվում: Ծախսած միջոցների մեջ պետք է նկատի ունենալ նաև մարդկային ռեսուրսները: Հոգեբանները պահանջում են միմյանցից առանձնացնել աշխատանքի օբյեկտիվ և սուբյեկտիվ արդյունքները: Օբյեկտիվ արդյունքներն են աշխատանքի արտադրողականությունը, ծավալը, որակը, հուսալիությունը և այլն: Սուբյեկտիվ արդյունքներն են մարդու հետաքրքրությունները աշխատանքի նկատմամբ, բավարարվածությունը, սոցիալական կարգավիճակը, ինքնագնահատականը:

Որպեսզի մարդը կարողանա պահպանել աշխատունակությունը, չվնասելով առողջությունը, անհրաժեշտ է մասնագիտական հոգեբանական հարմարվածություն: Հարմարվածության խախտման պատճառ կարող է հանդիսանալ մի կողմից մարդու մոտ բացասական հոգեվիճակը, մյուս կողմից՝ նրա աշխատանքի արդյունավետության անկումը:

Մասնագիտական հոգեբանական հարմարվածություն ասելով հասկանում ենք «մարդ և մասնագիտական միջավայր» համակարգի շարժուն հավասարակշռություն: Մասնագիտական միջավայրն իր մեջ ընդգրկում է աշխատանքի օբյեկտը և առարկան, աշխատանքային պայմանները, նպատակը, մասնագիտական խնդիրները և աշխատավայրում առկա սոցիալական հարաբերությունները:

Վ.Մ.Բեխտերները աշխատողների անձի զարգացման, առողջության պահպանման և ամրապնդման, առողջացման և աշխատանքի հիգիենայի միջոցներ է մշակել: Այս շարքի առաջին աշխատանքները պատկանում են Վ.Պ.Կաշկադամովին, որը գտնում է, որ աշխատող մարդու առողջությունը ապահովված կլինի, եթե նա հետևի կյանքի «համընդհանուր» կարգին: Այս ասելով նա նկատի ունի ճիշտ սնվելակարգը, բնությունից ճիշտ օգտվելը, ապրելու համապատասխան անհրաժեշտ պայմանները, մասնագիտական գործունեության բովանդակությունը և այլն: Մասնագիտական գործունեությունը մարդու կյանքի կարևոր բաղկացուցիչ մասերից մեկն է: Մարդը համարվում է առողջ, եթե նրա ֆիզիկական և ստեղծագործական պոտենցիալ հնարավորությունները, ուժերը ներդաշնակորեն զարգանում են՝ նրան դարձնելով հասուն, աշխատունակ և հասարակության մեջ ակտիվ մարդ:

Վերոնշյալից երևում է, որ մասնագիտական առողջությունը բոլոր ժամանակներում էլ արժանացել է տարբեր գիտնականների ուշադրությանը: Չենք ցանկանում մանկավարժի մասնագիտությունը գերազնահատել մյուս մասնագիտություններից, բայց միաժամանակ ցանկանում ենք առանձնացնել և ուշադրության կենտրոնում պահել ուսուցչի առողջությունը, թեկուզ այն պարզ պատճառով, որ նրա առողջությունից է կախված սովորողների առաջադիմությունը, նրանց մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի դրսևորումը, ինչպես նաև, ամենակարևորը՝ նրանց առողջությունը: Անհնար է պատկերացնել բարձր առաջադիմություն, առողջ սերունդ, եթե նրան դասավանդող ուսուցիչն ունի հոգեկան և ֆիզիկական առողջական, ինչպես նաև սոցիալական անլուծելի խնդիրներ:

Մանկավարժական գործունեության ակտիվությունը մեծամասամբ կախված է ոչ միայն այն բանից, թե նա որքանով է կարողանում իրականացնել իր մասնագիտական պարտականությունները, այլ նաև՝ նրա ֆիզիկական ու հոգեկան վիճակից ու սոցիալական բարեկեցությունից:

Ուսուցիչն ուսումնադաստիարակչական գործընթացի առանցքային, որոշիչ օղակներից մեկն է, գիտելիքների կրողը, վարքագծի, ապրելակերպ վարելու և առողջության նկատմամբ սովորողների մոտ համապատասխան մոտեցում ցուցաբերող օրինակելի անձ: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ուսուցչի մասնագիտական առողջության վիճակը մեծ կապ ունի նրա աշխատանքի արդյունավետության և կայունության հետ, որով էլ պայմանավորված է նրա մասնագիտական որակը: Ուսուցչի մասնագիտական առողջության խնդիրը պետք է դիտել որպես ազգի, հանրության առողջության պահպանման նախապայման:

«Ուսուցչի առողջության պահպանման խնդրի կարևորությունը պետք է դիտարկել ազգի առողջության պահպանման ընդհանուր հայեցակարգի համատեքստում: Մեծամասամբ ուսուցչի առողջությունից է կախված աճող սերնդի առողջությունը, երկրի ապագան»: Գրում է Լ.Մ.Միտինան [3, էջ 43]:

Ուսուցչի մասնագիտությունը դասվում է այն մասնագիտությունների թվին, որոնք հոգեբանական և նյարդային լարվածություն առաջացնելու ռիսկի մեծ գործոններ են: Դրա պատճառ կարող են հանդիսանալ օրվա ընթացքում նրանց երկարաժամկետ լարված նյարդային աշխատանքը, ինչպես նաև հասարակական պատասխանատվությունը: Ուսուցիչները քրոնիկ ծանրաբեռնված են, որն էլ հիվանդանալու լավ նախապայման է: Նրանք, որպես կանոն, հնարավորություն չունեն վերականգնելու իրենց կորցրած ուժերը, որի հետևանքով էլ ի վիճակի չեն հարմարվելու սովորողների հարաճուն, բազմաբնույթ կարիքներն ապահովելուն: Հուզական, գերծանրաբեռնված ուսուցիչն առաջին հերթին նախընտրում է իրավիճակի և հանգամանքների ծանոթ միջավայր, որտեղ նա կարող է հանգիստ ու լավ սովորեցնել իր գիտեցածն՝ իր իմացած ձևով և կանխատեսել մոտավոր արդյունքներ՝ նորամուծությունների անհրաժեշտություն չզգալով, որի արդյունքներն

անկանխատեսելի են [1]: Վերը ասվածը թույլ է տալիս ձևակերպել ուսուցչի մասնագիտական առողջության առանձնահատկությունները, որի ներքո մենք հասկանում ենք օրգանիզմի մի վիճակ, երբ այն ընդունակ է պահպանելու և ակտիվացնելու հուզական, ճանաչողական, մոտիվացնող անդրադարձային և կարգավորող մեխանիզմները, որոնք ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում ապահովում են աշխատողների աշխատունակությունը, արդյունավետությունն ու անձի զարգացումը ցանկացած պայմաններում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ուսուցչի առողջության վրա մեծ ազդեցություն են ունենում նաև նրա աշխատանքային գործունեության պայմանները: Հայաստանի կրթության զարգացման արդի փուլը բնութագրվում է որպես նորամուծությունների ներդրման փուլ, որի իրականացումն ուսուցիչներից մեծ ջանքեր ու նյարդային լարվածություն է պահանջում: Դա պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ նորության ներդրումն ուղեկցվում է աշխատակիցների կամ վարչական աշխատողների դիմադրությամբ, որի պատճառ կարող է լինել այդ նորության մասին ոչ ճիշտ պատկերացում ունենալը, նորությանը չտիրապետելը և այլ նման խոչընդոտներ: Դա բերում է հսկայական լարվածության, տեղեկատվական և ինտելեկտուալ ծանրաբեռնվածության ավելացման, մշտական վերապատրաստման և մասնագիտական հմտությունների ավելացման ու թարմացման անհրաժեշտության: Դպրոցում երկար տարիներ աշխատելու ընթացքում այս բոլորը կուտակվում է, և ուսումնական տարվա վերջում շատ ուսուցիչներ հոգեկան անհարմարավետություն, հոգնածություն, դատարկություն, դյուրագրգռություն, սոցիալական և մասնագիտական մեկուսացում են զգում, որոնք հանդիսանում են անձի մասնագիտական առողջության փոփոխության բնորոշ առանձնահատկություններ: Այս բոլորը թույլ է տալիս, որպես ուսուցչի մասնագիտական առողջության խախտման ախտանիշներ նկատի ունենալ հետևյալները.

- բացասական սուբյեկտիվ կարգավիճակը, որն առաջանում է ինքնագզացողության վատացման, արյան ճնշման բարձրացման, մասնագիտական ակտիվության, նորամուծությունների նկատմամբ հետաքրքրությունների անկման, ոչ կայուն կամ հակադրվելու պատրաստ բնավորության՝ զայրույթից կտրուկ անտարբերության անցնելու պատճառով,
- հոգու ցավի առկայությունը (հոգիս ցավում է)
- աշխատունակության անկումը կամ բացակայությունը, երբ ուսուցիչը նույնիսկ օրվա սկզբում իր մեջ ուժ չի գտնում կատարելու իր մասնագիտական պարտականությունները
- օրգանիզմի գործառնական հնարավորությունների ծավալի փոքրացումը (վաղ հոգնածության, ցրվածության զգացում, ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումից հրաժարվելու ցանկություն, ֆիզիկական ու հոգեկան ծանրաբեռնվածություն կրելու անկարողություն)
- կրթության բնագավառում հոգեբանական բռնությունների դրսևորումը (մեկ ուրիշի հաշվին ինքնահաստատումը), սովորողների նկատմամբ մշտական քննադատությունը, նրանց մարդկային արժանապատվության նվաստացումը, սովորողների հասցեին սպառնալիքներ, սովորողների հնարավորությունների և տարիքին անհամապատասխան պահանջմունքների ներկայացում և այլն [5, էջ 266]:

Բավական է որ, ուսուցչի առողջության խախտման 2-3 ախտանիշ արտահայտված լինի, որպեսզի նրա մոտ մասնագիտական պարտականությունների կատարման խնդիրներ առաջանան, որի պատճառով էլ ընկնի ուսուցման որակը, զգայությունը, սովորողների հետաքրքրությունների նկատմամբ ուշադրությունը, ինչպես նաև կորի

ցանկությունը օգնելու երեխաներին գտնելու իրենց տեղն ապագայում, դառնալու անկախ, ստեղծագործական և ինքնուրույն մարդ:

Այս բոլորից հետո դժվար չէ պատկերացնել, թե որքան կարևոր է ուսուցչի մասնագիտական առողջությունը և որ յուրաքանչյուր մեկն՝ ով կապ ունի առողջության պահպանման այս տեսակի հետ, պետք է ամեն կերպ աշխատի՝ չխնայելով ո՛չ նյութական, ո՛չ էլ պահանջվող այլ հնարավորություններ պահպանելու ուսուցչի մասնագիտական առողջությունը: Միայն առողջ ուսուցիչը կարող է համապատասխանել իր կոչումին, իրականացնել իր մասնագիտական պարտականությունները, և մենք կունենանք առողջ սերունդ և առողջ ապագա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Пономаренко В.А. Психология жизни и труда летчика. Воениздат – М., 1992., 224 с.
2. Маклаков А.Г. Основы психологического обеспечения профессионального здоровья военнослужащих: Автореф. дисс. докт. психол. наук. – СПб., 1996.
3. Психология здоровья / Под ред. Г.С. Никифорова. – СПб.: «Питер» 2003. 607 с.
4. Шостак В.И. Профессиональное здоровье // Психология профессионального здоровья: учеб. пособие / под ред. Г.С. Никифорова. – СПб.: Речь, 2006.–с. 71.
5. Сыманюк Э.Э., Печеркина А.А. Противодействие профессиональным деформациям // Народное образование. – № 9. 2010. с. 265-269.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО ЗДОРОВЬЯ УЧИТЕЛЕЙ И ВАЖНОСТЬ ЕГО СОХРАНЕНИЯ

В.Г.ГЮЛАЗЯН, Ж.Б.МАШУРЯН, А.Э.АРУТЮНЯН

В статье представлено влияние профессионального здоровья на повышение качества и эффективность труда. В частности, говорится о профессиональном здоровье учителя, которое, помимо большого влияния на качество и эффективность обучения и воспитания учащихся, непосредственно влияет и на их здоровье. В результате авторы приходят к заключению, что только здоровый учитель способен обеспечить высокое качество и эффективность обучения, не нанося ущерб здоровью учащихся.

SUMMARY

PROFESSIONAL HEALTH PROBLEMS OF TEACHERS AND THE IMPORTANCE OF PRESERVATION

V.G.GYULAZYAN, ZH.B.MASHURYAN, A.E.ARUTYUNYAN

The paper presents the impact of professional health on the quality and efficiency of the work. In the paper especially teachers' professional health is stressed which influences not only the efficiency of teaching and upbringing but also students' health. In the result we have concluded that only the healthy teacher can ensure high quality and efficient education without harming the students' health.